

## ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 222-Ա

29 հուլիսի, 2020 թվական

### ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 14-ի N 1822-Ա, N 1824-Ա, N 1829-Ա, N 1832-Ա, N 1841-Ա, N 1854-Ա, N 1855-Ա, 2020 թվականի հուլիսի 15-ի N 1868-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի հուլիսի 27-28-ն իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
  - 1) «Ծիրան Մարկետ» ՍՊԸ՝ ք. Երևան, Գայի պողոտա 8/2.
  - 2) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հայաստանի ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ՝ ք. Երևան, Արամի 1.
  - 3) «Զոլոտոե Պոլե» ՍՊԸ՝ ք. Աբովյան, Է. Պետրոսյան 1/31.
  - 4) «Ալբերտ Հովհաննիսյան» Ա/Ձ՝ Վանաձոր համայնք, Երևանյան խճուղի 119/26.
  - 5) «Սուսաննա Մկրտումյան Դադիկոյի» Ա/Ձ՝ Վանաձոր համայնք, Տերյան 1/15.
  - 6) «Արմենակ Չամուրյան» Ա/Ձ՝ Վանաձոր համայնք, Մյասնիկյան 6:
  - 7) «Անի Դանդուղյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, փ. Վ. Գևորգյան 5/3-5/3-1.
  - 8) «Կարեն Մարգարյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Սպանդարյան 45/2.
  - 9) «Ռաֆ էլ Գրիգ» ՓԲԸ, ք. Եղեգնաձոր, Շահումյան 20.
  - 10) «Ռազմիկ Խաչատրյան» Ա/Ձ՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 12/2:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:

3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:

4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 29/07/20 17:17:35 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

**Տ. ԱՎԻՆՅԱՆ**